

Կանոնավոր և անկանոն կոտորակներ/ մաս 2.

Համարիչ
հայտարար

Այն կոտորակը, որի համարիչը փոքր է հայտարարից անվանում ենք կանոնավոր կոտորակ:

Օրինակ՝ $\frac{5}{8}$ կոտորակը կանոնավոր է, քանի որ $5 < 8$:

Այն կոտորակը, որի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան անվանում ենք անկանոն կոտորակ:

Օրինակներ՝

$\frac{7}{5}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 > 5$

$\frac{7}{7}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 = 7$:

Դասարանական և տնային առաջադրանքներ՝

Իրարից առանձնացրեք կանոնավոր և անկանոն կոտորակները.

$\frac{19}{25}$, $\frac{17}{15}$, $\frac{16}{105}$, $\frac{7}{8}$, $\frac{117}{5}$, $\frac{79}{85}$, $\frac{7}{31}$, $\frac{27}{4}$, $\frac{11}{905}$, $\frac{79}{95}$, $\frac{56}{65}$, $\frac{45}{11}$, $\frac{151}{151}$, $\frac{33}{33}$

Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

կանոնավոր կոտորակ

$\frac{*1}{91}$, $\frac{*7}{54}$, $\frac{2*5}{214}$, $\frac{127}{1*5}$

Անկանոն կոտորակ

$\frac{*8}{18}$, $\frac{3*7}{317}$, $\frac{2*5}{215}$, $\frac{227}{2*7}$

Ջամեմատեք.

$$\frac{7}{3} \text{ և } \frac{2}{3}$$

$$\frac{17}{4} \text{ և } \frac{52}{54}$$

$$\frac{19}{4} \text{ և } \frac{8}{11}$$

$$\frac{2}{5} \text{ և } \frac{6}{4}$$

$$\frac{1}{4} \text{ և } \frac{4}{6}$$

$$1 \text{ և } \frac{1}{2}$$

Արտահայտիր նշված միավորներով`

$$\frac{3}{5} \text{ ց} = \text{ կգ}$$

$$\frac{6}{100} \text{ կմ} = \text{ մ}$$

$$\frac{7}{10} \text{ րմ} = \text{ սմ}$$

$$\frac{8}{50} \text{ կգ} = \text{ գ}$$

$$\frac{9}{4} \text{ ժ} = \text{ ր}$$

Խնդիր1.

Մայրիկը իր պատրաստած պիցցայի $\frac{1}{8}$ -րդ մասը տվեց Նարեհին, $\frac{2}{8}$ -րդ մասը` Աննային: Պիցցայի ո՞ր մասը մնաց:

Խնդիր2.

Ավտոմեքենան պետք է անցներ 200 կմ ճանապարհ: Նա արդեն անցել է ճանապարհի $\frac{3}{4}$ -րդ մասը: Որքա՞ն ճանապարհ նրան մնաց անցնելու:

Խնդիր3.

Ամբողջ ճանապարհի $\frac{5}{9}$ -րդ մասը անցնելուց հետո ո՞ր մասը կմնա անցնելու:

Խնդիր4.

Գիրքն ունի 500 էջ: Գայանեն կարդաց գրքի $\frac{3}{4}$ -ը: Քանի՞ էջ մնաց կարդալու: